ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/64

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Մասնակից՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Թորոսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, աուդիտորական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3197-2021 գրությամբ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 26.02.2021թ. թիվ 01/24.1/505-2021 գրության հիման վրա, 04.03.2021թ.-ին «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 04.03.2021թ.-ին:

05.03.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/64 համարի ծածկագիրը:

12.03.2021թ.-ին, 18.03.2021թ.-ին և 26.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.03.2021թ.-ին:

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 26.02.2021թ. թիվ 01/24.1/505-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար 2021 թվականի փետրվարի 02-ին աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) հավաստել է, որ բավարարում է հրավերով սահմանված պահանջներին, սակայն Ընկերության կողմից վերակառուցման և զարգացման միջազգային բանկ կատարված հարցմանն ի պատասխան ստացված տեղեկատվության համաձայն Մասնակիցը ներառված չէ բանկի կողմից իրավասու աուդիտորների ցանկում. և

նրա կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի չի համարվի բանկի համար, ուստի ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 40-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 05.03.2021թ.-ին գրությամբ դիմել է «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3197-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարությունը Պատվիրատուի միջնորդությամբ 04.03.2021թ. թիվ ՍՑ-ԼՕ-2021/64 ծածկագրով «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունվել է վարույթ:

Ուսումնասիրելով նախաձեռնված ընթացակարգի հիմքում ընկած փաստերը գտնում ենք, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 4-րդ բաժնով սպառիչ սահմանված է եղել բոլոր այն փաստաթղթերը, որոնք մասնակիցը պետք է ներկայացնի հայտի հետ միասին, ինչը Ընկերության կողմից ներկայացվել է:

Հրավերի 8-րդ բաժնով սահմանվել է հայտերի գնահատման և ամփոփման հետ կապված իրավահարաբերությունները:

Նույն բաժնով սահմանվել է, որ ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Սույն ընթացակարգի նյութերից պարզ է դառնում, որ Հանձնաժողովը իր Արձանագրության 3-ով (հրապարակված է 10.02.2021թ.) որոշել է մասնակցի հայտը գնահատել բավարար և անցել գնահատման հաջորդ փուլ, այն դեպքում, երբ հայտերի գնահատումը տվյալ գնման ձևի իրականացվում էր մեկ փուլով:

Բացի այդ, Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և ղեկավարվելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 67-րդ կետի՝ հարցում կատարել վերակառուցման և զարգացման միջազգային բանկ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում ընդգրկված լինելու փաստը ճշտելու նպատակով:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 67-րդ կետը սահմանում է, որ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից

ստացված փվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած փվյալների իսկության ստուգման արդյունքում փվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա փվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Տվյալ նորմի իրավական վերլուծությունից պարզ է դառնում, որ Հանձնաժողովը իրավասու է միայն մասնակցի կողմից ներկայացված փվյալների իսկությունը ճշտելու նպատակով, այն էլ, միայն պատճառաբանված որոշման առկայության պայմաններում ստանալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից գրավոր եզրակացություն:

Սակայն ինչպես պարզվում է գործի նյութերից, Հանձնաժողովը հարցումը չի կատարել 1. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, 2. չի կայացրել պատճառաբանված որոշում, ինչը ակնհայտ է փվյալ նիստի արձանագրությամբ, 3. ինչպես նաև հարցումը չի իրականացրել մասնակցի կողմից ներկայացված փվյալի իսկությունը ճշտելու նպատակով:

Ընկերությունը փվյալ գնման ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է միայն գնային առաջարկ և դիմում-հայտարարություն, ինչը պահանջված է եղել հրավերով:

Հայտարարությամբ Ընկերությունը հավաստել է, որ բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջները:

Գնանշման հրավերի հայտարարությամբ սահմանվել է, որ ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Հրավերի 2-րդ բաժնով սահմանվել են մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները: Մասնավորապես՝ սպառիչ սահմանված է եղել բոլոր այն պայմանները, որոնց դեպքում մասնակիցը իրավունք չուներ մասնակցելու փվյալ ընթացակարգին:

Նույն բաժնով եղել է սահմանված նաև, որ մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ փվյալ հրավերի 2-րդ մասի 2.2 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն

կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

Պատվիրատուն տվյալ պարագայում ոչ միայն դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից և իրականացրել է ՀՀ օրենսդրությամբ չնախատեսված ընթացակարգ, տվյալ պարագայում ձեռք բերելով բանկային կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվություն, որը արգելված է քաղաքացիական օրենսգրքով, բացառությամբ գնումների օրենսդրությամբ սպառիչ սահմանված դեպքերի:

Սահմանադիրը 63-րդ հոդվածով զուր չի սահմանել, որ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործումն արգելվում է:

2. Հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրով եղել է սահմանված հետևյալը.

«Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:»

Նշված պահանջը տառացի մեկնաբանելու պարագայում ակնհայտ է, որ ըստ պատվիրատուի մասնակիցը պետք է ընդգրված լինի բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:

«Crow and Asatryans» ընկերությունը համաշխարհային լավագույն աուդիտորական ընկերությունների տասնյակում գտնվող Crow կազմակերպության լիիրավ անդամ է:

Հատկանշական է, որ որոշ միջազգային փորձագիտական վերլուծություն իրականացնող կազմակերպությունների կողմից Crow ընկերությունը զբաղեցնում է 8-րդ հորիզոնականը, իսկ որոշ կազմակերպություններ չեն ընդգրկում լավագույն տասնյակում:

Պատվիրատուի կողմից կատարված հարցմամբ ստացվել է պատասխան, որ «Crow and Asatryans» ՍՊ ընկերությունը ներառված չէ Բանկի կողմից իրավասու աուդիտորների ցանկում, ուստի այդ կազմակերպության կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի չի լինի Բանկի համար:

Grant Thornton SRL (Ռումինիա) և Grant Thornton ՓԲԸ (Հայաստան) կոնսորցիումի կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի կհամարվի Բանկի համար:

BDO Հայաստան ՓԲ ընկերությունը ներառված է Բանկի կողմից իրավասու աուդիտորների ցանկում որպես «ամբողջովին ընդունելի», հեռևաբար BDO Հայաստան

ՓԲԸ կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունն ընդունելի կլինի Բանկի համար:»

Տվյալ հորիզոնական կամ ցանկում ընդգրկելու համար Ընկերությունը որևէ կոնկրետ ընթացակարգային գործողություն չի իրականացնում, այն պարզապես ընկերության աշխատանքի գնահատականն է:

Ուստի կարևոր է արձանագրել, որ տվյալ պահանջը Ընկերության կողմից ընդունվել է վերոնշվածի համատեքստում, տվյալ ցանկը հրապարակային չէ, Պատվիրատուի համար որևէ կերպ մասնակիցներին չի ուղղորդվել հրավերով նշված ցանկը տեսնելու համար:

Հատկանշական է նաև տվյալ պարագայում, որ Grant Thornton SRL (Ռումինիա) և Grant Thornton ՓԲԸ (Հայաստան) կազմակերպության հետ կապված նշվել է պատասխանում, որ նրա կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ոչ թե «ամբողջովին», այլ ընդունելի կհամարվի Բանկի համար, սակայն տվյալ մասնակցի ներկայացրած հայտը Պատվիրատուի կողմից չի մերժվել:

Ուշադրության է արժանի նաև հետևյալը.

- սույն գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել Grant Thornton SRL (Ռումինիա) և Grant Thornton ՓԲԸ (Հայաստան) կազմակերպությունը, գնահատող հանձնաժողովը հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն,

Սակայն՝

- նույն գնման առարկան ձեռք բերելու նպատակով 2021-03-05 թվականին հայտատարվել է ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/17 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հրավեր, որին մասնակցության միակ հայտ ներկայացրել է «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս մասով գնահատող հանձնաժողովի կողմից հարցում չի կատարվել բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում համարվելու փաստը ստուգելու վերաբերյալ: Նշված գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած գնային առաջարկը տվյալ ծառայության ձեռքբերման համար նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցելու հանգամանքով պայմանավորված,

- նույն գնման առարկան ձեռք բերելու նպատակով նույն Պատվիրատուն արդեն 2021-03-10 թվականին է հայտարարել ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/16 ծածկագրով գնման մրցույթ: 03.11.2021թ. պատվիրատուն վիճարկման առարկա հանդիսացող պահանջում կատարել է հետևյալ փոփոխությունը.

«Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում» բառերը փոխարինվել են «Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար «Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) տարածաշրջանում իրավասու աուդիտորական ընկերությունների» ցանկում» բառերով:

Նշված գնման ընթացակարգին կրկին միակ մասնակից է եղել «ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն, որի հետ կապված վերոնշված պահանջի բավարարման վերաբերյալ գնահատող հանձնաժողովը Բանկ հարցում չի կատարել: Սույն գնման ընթացակարգով սահմանված տեխնիկական բնութագիրը էականորեն տարբերվում է նախորդներից, ինչը առնվազն հաստատում է, որ տվյալ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը եղել է թերի և ոչ լիարժեք:

Վերոգրյալից հաստատվում է մեր դիրքորոշումը առ այն, որ տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը եղել է անորոշ, նշված չի եղել թե ինչ ցանկի մասին է գնում խոսքը, որ Ցանկը կարող է համարվել ամբողջովին ընդունելի բանկի համար, որը Պատվիրատուն հետագա նույն գնման առարկան ձեռք բերելու նպատակով հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրի տվյալ պահանջը հստակեցրել է:

Պատվիրատուի կողմից տվյալ գնման առարկան ձեռք բերելու համար իրականացված գնման ընթացակարգերով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները և իրականացրած սուբյեկտիվ, տարաբնույթ, երկակի ստանդարտներ պարունակող վարքագիծը Ընկերության համար թույլ է տալիս ողջամիտ կարծիք ձևավորել առ այն, որ Պատվիրատուն հատուկ պահանջներ է սահմանել կոնկրետ մասնակցի հաղթանակը ապահովելու համար և «Crow and Asatryans» ՍՊ ընկերության նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքը պայմանավորված է եղել դրանով:

Նշված պահանջը վերաբերվել է ոչ թե բանկի կողմից ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում ընդգրկվելուն, այլ բանկի համար, և Ընկերության համար ողջամտորեն ենթադրելի էր, որ Բանկի համար ինքը ընդգրկված է տվյալ ցանկում: Բացի այդ տվյալ պահանջով չի սահմանվել թե, որ պահից սկսած մասնակիցը պետք է ընդգրկված լինի տվյալ ցանկում՝ հաշվի առնելով որ ծառայության մատուցման ժամկետը նախատեսված է եղել մինչև մայիսի 1-ը: Այսինքն Ընկերությունը ողջամտորեն կարող էր պայմանագիրը կնքելուց և ծառայության մատուցումն սկսելուց հետո քայլեր ձեռնարկել որևիցե ցանկում ընդգրկվելու համար, եթե նույնիսկ պարզվի, որ

ընդգրկված չէ: Ընկերությունը Պատվիրատուին ներկայացնում է որակավորման ապահովում, որը հավաստում է մասնագիտական պահանջներին իր բավարարման փաստի մասին և դրանով իսկ կատարողը կրում է որակի ապահովման իր ռիսկը, որը չապահովելով մասնակիցը կրում է պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման և դրա հետևանքով պայմանագրի միակողմանի լուծման ռիսկը:

Պատվիրատուն ուղղակիորեն պարտավոր էր իր հրավերով նախատեսել մասնակիցների համար հայտի հետ միասին պահանջվող հավաստումը ներկայացնելու մասին, հակառակ պարագայում ստացվում է, որ Պատվիրատուն ստանում է բացարձակ իրավասություն իր կողմից նախագծած ծառայության տեխնիկական բնութագրի յուրաքանչյուր պահանջ կամ տվյալ ոչ միայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ նաև իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից պարզելու համար:

3. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տփալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը Հանձնաժողովը գնահատել է անբավարար և մերժել, ինչի համար հիմք է հանդիսացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի 19.02.2021թ. ստացված նամակը, որը հրապարակվել է տեղեկագրում

23.02.2021թ.-ին, նույն օրը հրապարակելով արդեն պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը:

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 19.02.2021թ.-ից, սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. 1\1 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունների ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի

պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց::

4. <u>ՍՑ-LO-2021/64 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.02.2021թ.-ին հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 09.02.2021թ.-ին ժամը 10:00-ը ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) հավելված 6-ով՝ պետության կարիքների համար աուդիտորական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է, որ Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում: Մասնակիցը պետք է ունենա ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ մատուցելու լիցենզիա:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ է ներկայացրել «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.02.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը,

ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետով, որոշել է նիստը կասեցնել և հարցում կատարել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ՝ հրավերով սահմանված գնման ընթացակարգի մասնակիցների տվյալ բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում ընդգրկված լինելու փաստը ճշտելու նպատակով:

vi. 17.02.2021թ.-ին kochnakyan@worldbank.orb էլեկտրոնային հասցեից hven@hven.am և sahradyan@hven.am էլեկտրոնային հասցեներին ուղարկված հաղորդագրության համաձայն՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն ներառված չէ Բանկի կողմից իրավասու աուդիտորների ցանկում, ուստի Մասնակցի կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի չի լինի Բանկի համար:

vii. Հանձնաժողովի 22.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից 11.02.2021թ.-ի ներկայացված հարցմանն ի պատասխան ստացվել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի 19.02.2021թ.-ի ստացված նամակը, ըստ որի «Քբոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն ներառված չէ բանկի կողմից իրավասու աուդիտորների ցանկում և նրա կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի չի համարվի բանկի համար, ինչը չի բավարարում հրավերի պահանջներին:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետով, որոշել է «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ix. Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կողմից վարվող աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում առկա տեղեկատվության համաձայն՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն 29.12.2020թ.-ի թիվ 22-Ա որոշմամբ ընդգրկվել է ռեեստրի ցանկում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3197-2021 գրությամբ «Քրոու ընդ

Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու

հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու

ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու

մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.02.2021թ.-ին հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.21) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում

ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.02.2021թ.-ին հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 6-ով՝ պետության կարիքների համար աուդիտորական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում: Մասնակիցը պետք է ունենա ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ մատուցելու լիցենզիա:

Հանձնաժողովի 10.02.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 67-րդ կետով, որոշել է նիստը կասեցնել և հարցում կատարել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ՝ հրավերով սահմանված գնման ընթացակարգի մասնակիցների, տվյալ բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում ընդգրկված լինելու փաստը ճշտելու նպատակով, ինչի արդյունքում 17.02.2021թ.-ին kochnakyan@worldbank.orb էլեկտրոնային հասցեից hven@hven.am և sahradyan@hven.am էլեկտրոնային հասցեներին ստացվել է պատասխան, որի համաձայն՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն ներառված չէ Բանկի կողմից իրավասու աուդիտորների ցանկում, ուստի Մասնակցի կողմից ներկայացված աուդիտորական հաշվետվությունը ընդունելի չի լինի Բանկի համար, ինչի արդյունքում Հանձնաժողովը, 22.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ որոշել է «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավանորմերի՝ սույն գործի փաստական հանգամանքների հետ համադրության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում ընթացակարգին մասնակցության հայտ ներակայացրած մասնակիցների ընդգրկված լինելու փաստի հաստատված լինելու կամ հերքելու համար, անհրաժեշտ է այդ ցանկի հստակեցում: Այլ կերպ ասած՝ հստակ ի՞նչ ցանկի մասին է խոսքը գնում և ո՞ր ցանկում ընդգրկված լինելու հանգամանքը Բանկի համար կլինի ընդունելի, որը սույն դեպքում պարզ չէ:

Ավելին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կողմից վարվող աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում առկա տեղեկատվությամբ հիմնավորվում է, որ «Քրոու

ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ն 29.12.2020թ.-ի թիվ 22-Ա որոշմամբ ընդգրկվել է նշված ցանկում՝ հիմք ընդունելով «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, համաձայն որոնց՝ աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում:

Վերը նշված դատողությունները քննարկելով Օրենքի 13-րդ հոդվածի համատեքստում, բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Սույն գործում առկա փաստերի՝ գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի ուսումնասիրության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջները պետք է հնարավորություն տան մասնակիցներին ճշգրիտ ընկալել գնման առարկան, ապահովեն մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված այն պահանջը, որ Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների

ցանկում չի համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պայմաններին, ինչի արդյունքում խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Պատվիրատուի կողմից, ընթացակարգի քննության ընթացքում, Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ չի ներկայացվել որևէ վերաբերելի ապացույց կամ դիրքորոշում՝ Հրավերով սահմանված Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկի առկայության մասին և այն մասին, որ արդյոք վերոնշյալ ցանկում Մասնակիցը պետք է ընդգրկված լինել հայտը ներկայացնելու օրվա, թե պայմանագրի կատարման արդյունքները հանձնելու օրվա դրությամբ:

Վերոգրյալերը համադրելով գործում առկա փաստերին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների խախտմանը նպաստել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում առկա թերությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ

խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.02.2021թ.-ին հայտարարված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր պահանջների խախտման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.03.2021թ.-ի թիվ 26/26-1/3197-2021 գրությամբ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/64 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**